Ալեքսանդր Շիրվանզադե

Աճուրդ

(Բաքվի կյանքից)

Նոյեմբերի 15-ը Բաքվի համար պատմական էր: Մի շաբաթ առաջ արդեն քաղաքը լեցվել էր եկվորներով: Հյուրանոցներում ազատ սենյակներ չկային: Երեկոները ժողովարանի ընդարձակ դահլիճներում ասեղ գցելու տեղ չկար: Երևում էին զանազան ազգերի, կրոնների, երկրների ներկայացուցիչները: Կովկասի բոլոր քաղաքներից եկել էին հեշտ հարստանալու ջերմ փափագ ունեցողները: Եկվորների մեջ տիրապետող տարրը կազմում էին թիֆլիսեցիները: Ինձ հետաքրքրում էր միմիայն նրանց հոգեբանությունը: Լսել եմ, որ նրանք կազմել են մոտ յոթ ընկերություններ, միմյանցից մեծահնչուն ու մինչև անգամ քաղցրահնչուն անուններով՝ «Թնդանոթ» «Կապանք», «Զանավար» և այլն ավելի զոռբա անուններ: Ուզում եմ իմանալ ովքեր են այդ սոսկալի մարդիկ, որ կազմել են այդ ընկերությունները: Պտտում եմ կլուբի սենյակները: Ամենուրեք ծանոթ դեմքեր:

Ըհը, Մաթո՛ս, դո՞ւ էլ ես այստեղ, հարցնում եմ իմ վաղեմի ծանոթներից մեկին, որի գրպաններում միշտ մկներ էին խաղում, քանի գոնե ես Թիֆլիսում էի: Տեսնում եմ Մաթոսս հպարտացել է, բարևիս ակամա է պատասխանում: Դու մի ասա, մարդը ընկերություն է կազմել և ուզում է նավթարդյունաբեր դառնալ:

Եկել եմ աճուրդին մասնակցելու, հազիվհազ պատասխանում է Մաթոսը, աշխատելով իր նիհար մեջքից կպած փորը դուրս ցցել, որպեսզի տեսնողները չասեն, թե այդ փորը, եթե կամենա, չի հաստանալ ու տկճոր դառնալ:

Բայց դու և աճո՛ւրդ:

Ի՞նչ կա, որ զարմանում ես:

Ախար փող է հարկավոր:

Մեր ընկերությունը իրեն դրամարկղում արդեն ունի 60 հազար, եթե կամենաք կարող է գումարը հասցնել վեց հարյուր հազարի: Դու ինձ նավթահող տուր, նավթահող . . .

Բայց ինչպե՞ս եք հավաքել:

Հավաքել ենք, էլի:

Մաթոս ախպերը չէ բացատրում, բայց ես իսկույն ուրիշներից իմանում եմ գաղտնիքը: Բանից երևում է, որ ախպար Մաթոսը մեղրավաճառ Առաքելի, փայտավաճառ Թաթոսի հետ կազմել է ընկերություն. տպել է լրագրերում հայտարարություն և բերանացի համոզել Թիֆլիսի մսավաճառներին, խարազներին, դերձակներին, բախալներին, կոշկակարներին, ածխավաճառներին, որ համաձայնեն վերջապես մի ամսում միլիոնատեր դառնալու, ընկերության դրամարկղը մտցնելով միմիայն հնգական ռուբլի:

Փորձը աջողություն է ունեցել, դյուրահավատ թիֆլիսեցիները գրվել են «Զանավար» ընկերության անդամ, տալով նրան իրենց վերջին կոպեկները: Եվ Մաթոսը Առաքելի ու Թաթոսի հետ այդ փողերով եկել են աճուրդին մասնակցելու, հող վերցնելու, նավթահանք բանալու: Այն վարդագույն հույսով, որ իրանք պիտի դառնան... Դիրեկտորներ:

Չէի իմանում, որ այդքան ղոչաղ ես, Մաթոս ջան, հայտնում եմ զարմանքս բարեկամիս և մոտենում ուրիշներին:

Գրեթե բոլոր թիֆլիսեցիները հին բարեկամներս են կամ գոնե ծանոթներս: Նրանց մեջ կան և՛ վարկ ունեցող վաճառականներ, և՛ ինժեներներ, և՛ նախկին ազատամիտներ, ուսուցիչներ, և՛ լրագրի թղթակիցներ, և՛ տիրացուներ, մի հատ էլ ժամհար, ով ասես: Ես չգիտեմ, որին բարևեմ, որի քեֆը հարցնեմ՝ այնքան

շատ են:

Ճարահատյալ բոլորից հեռանում եմ, մի անկյունում կանգնում ու դիտում: Ինձանից ոչ հեռու կանգնած են երկու վաղեմի նավթարդյունաբերողներ, մեկը բուն բաքվեցի, մյուսը ղարաբաղցի, և խոսակցում են.

Ադա, դա հինչ ջուռա-ջուռա մարդքիկ են եկել, ասում է բաքվեցին, ադա, դրանք ովքե՞ր են...

Հինչ գիդամ, քմատաղ, լոխ էլ ուզում ըն մըլիոնատեր տեռնալ . . .

Ադա, մի ասա տեսնամ, դա հովա՞:

Հուրն ես ասում:

Այ էն ուզուն զուլաղը, ցույց է տալիս բաքվեցին մի հարուստ թիֆլիսեցու, որ Թիֆլիսում մեծ հավակնություն ունի արիստոկրատ երևալու և միշտ արիստոկրատ օջախներում է պտտում . . .

Հինչ գիդամ, բուրավոյ մաստերի է նման...

«Ուզուն ղուլաղը», որ Թիֆլիսում հազիվ յոթ մարդկանց բարևից մեկին պատասխանում է, Բաքվի կլուբում բազմաթիվ միլիոնատերերի մեջ այնքան է ճնշվել ու խեղճացել, որ փալանը կորցրած ձիու է նման: Չքացել է նրա մշտական գոռոզությունը: Նա մեջքից երկու ծալ թեքված, մի ստրկական ժպիտ երեսին, սեղմում է նախկին սայլապանների խոհարարների ու մրգավաճառների ձեռը, վասնզի նրանք միլիոնատերեր են:

Զարմանալի դեմոկրատիկ քաղաք է Բաքուն, և այս, իմ կարծիքով, նրա գլխավոր արժանավորությունն է: Նրա համար չկա ո՛չ անցյալ, ո՛չ ծագում: Նա մի հսկայական կաթսա է, որի մեջ ընկնողը ձուլվում է ու խառնվում մյուսների հետ և կազմում մի ընդհանուր զանգված: Ճշմարիտ է, միայն փողն է այստեղ մարդկանց երկրպագության գլխավոր առարկան, բայց որովհետև նա արդյունք է մեծ մասամբ անհատական եռանդի, ճարպկության, եթե ոչ խելքի, ուստի այս վերջին հատկությունները գերադասում են ծույլ ազնվականությունից և ցեղական

անիմաստ և անարյուն գոռոզությունից: Ահա ինչու Թիֆլիսից եկած ազնվականները, հայտնի ընտանիքների զավակները այնչափ են միայն այստեղ հարգելի, որչափ հաստ է նրանց գրպանը: Եթե նրանք չգիտեն իրանց տարեկան եկամուտը հարյուրհազարներով հաշվել, կարող են որքան կամենան փքվեն իրանց անցյալով, ծագումով, հայրերի ու նախահայրերի ձիրքով կամ հերոսությունով, բաքվեցու համար ամեն ինչ աճուրդով է որոշվում, շատ է վճարում, նա է և՛ մեծը, և՛ խելոքը, և՛ ազնվականը, և՛ գեղեցիկը, և՛ տաղանդավորը...

Ուստի զարմանալի չէր ինձ համար, որ Բաքվի կլուբում բարեկամացել էին ու ընկերացել այն թիֆլիսեցիները, որոնք իրանց քաղաքում ոչինչ հարաբերություն չունին միմյանց հետ: Այստեղ արիստոկրատ և դեմոկրատ, հայտնի ընտանիքի զավակ և մի խարազի որդի թև թևի տված էին շրջում, միասին ընթրում ու միասին գալիս ու գնում: Ահա և աճուրդի օրը: Արքունական կալվածների վարչության փոքրիկ դահլիճը առավոտյան 12 ժամին արդեն լի է բազմությունով: Եվ ի՜նչ բազմություն. ռուս, հայ, անգլիացի, ֆրանսիացի, լեհացի, թուրք, վրացի, բոլորը խառնվել են միմյանց: Յուրաքանչյուրը մի ահագին ծրար ձեռին փողով լի, մոտենում է դահլիճի անկյունում կանգնած սեղանին և դնում նահանգապետի առջև: Բանկերում այդ օրը փող չի մնացել. բոլորը դատարկվե՛լ են: Ոմանք թուղթ փող չգտնելով, ոսկի են բերում: Ահա ամբոխը ճեղքելով, մի ահագին ձեռնարկղ ոսկով լի ձեռին, հազիվհազ կարողանում է ոտները փոխել մի նավթարդյունաբեր: Նրա բեռան ծանրությունը կլինի մոտ 3 4 փութ: Քրտինքը թափվում է նրա երեսից: Նա կարմրել է, հազիվհազ շունչ է քաշում, աչքերը քիչ է մնում դուրս պրծնեն: Բայց նա ժպտում է: Տասնյոթ տարի սրանից առաջ ես նրան տեսել եմ սայլապանի դերում, մրոտ ձեռքերը կրծքին դարսած՝ գրասենյակների առջև կանգնած, իր վարձին սպասելիս: Այժմ նա 4 5 միլիոնի կարողություն ունի, բայց սայլապանի սիրտը դեռ մնացել է նրա մեջ: Նա կասկածոտ է և զուցե ժլատ: Նա բարվոք է համարում մոտ 60 տարեկան հասակում հասարակ մշակի բեռան ծանրությունը կրել, քան հինգ ռուբլի տալ մի артелщик-ի, որ 3 4 փթանոց ձեռնարկղը բերի աճուրդավայրը...

Մեկ ժամը կեսօրվա լրանում է: Բոլոր ծրարները ներկայացված են: Պաշտոնյաներից մեկը անցնում է ամբոխի միջով . բարձրաձայն կրկնելով.

«Պարոններր, մեկ ժամը լրանում է, ով ծրար ունի, թող շտապի հանձնելու»:

Դահլիճ, պատշգամբ, նախասենյակ լի են ամբոխով: Նույնիսկ սանդուղքը ծածկված է մարդկանցով: Դեմքերը արտահայտում են հույս, հուզում, անհամբերություն, գրգռում, կեղծ անտարբերություն, շահամոլություն, անհագություն, քծնություն, շողոքորթություն, կշտություն, ինչ կամենաք, բացի վեհությունից: Այստեղ կան, բացի սովորական վաճառականներից, նավթարդյունաբերներից և գործակատարներից, ինժեներներ, իրավաբաններ, ազատամիտներ, արմատականներ, աշխարհից իբր թե զզված ծակ փիլիսոփաներ, նաև ձեր խոնարհ ծառան, իբրև մեկը փոքրաթիվ հանդիսականներից այդ հետաքրքրական ներկայացմանը: Ամենի ուշադրությունը գրավում են թիֆլիսեցիները, որովհետև ամենից շատ հուզվողը, աղմկողը, գոռոզն ու վազվզողը նրանք են: Բաքվեցիները համեմատաբար հանգիստ են: Ինչ է նրանց համար այդ բոլոր «Զոռբա», «Զանավար» և այլն մեծահնչուն ընկերությունների բերած գումարները, մի բաքվեցու մի ամսվա եկամուտը: Ամենից համեստը Թիֆլիսի նոր կազմված ամենամեծ ընկերության ներկայացուցիչներն են մի լուրջ վաճառական և մի հասարակական գործիչ ու ինժեներ: Ամենից անհամեստը «Շիր ու խուրշիդ» ընկեցության ներկայացուցիչներից մեկն է: Նա, անդադար սրան ու նրան հրելով, վազվզում է և ծանոթ ու անծանոթի հարցնում.

Դու ի՞նչ գին ես տվել № 25-ին:

Ադա, դա հո՞վ ա. աս հարբած կովը, հարցնում է մի շամախեցի:

Խոյեցի, պատասխանում է մի դարաբաղցի:

Լրանում է մեկ ժամը, մարդկանց հուզումը հասնում է իր գագաթնակետին: Լսվում է նահանգապետի հանգիստ ձայնը.

Պարոններ, ծրարները բացվում են:

Այդ ժամանակ դահլիճում շունչ քաշել անկարելի էր: Մարդկանց երեսներից քրտինքը թափվում էր անձրևի պես: Ոմանք տնից շտապով դուրս եկած լինելով,

մոռացել էն թաշկինակ վերցնել, երեսները քսում են հարևանների ուսին: Մեկի փողկապն է կոտրվել, ընկել, մյուսի վերարկուի կոճակները, երրորդը աղաղակում է, թե ջարդեցին իր ոտները: Տիրում է մի այնպիսի իրարանցում, որպիսին կարելի է տեսնել միայն քելեխի հավաքված մուրացկանների մեջ: Շամախեցիներն ու ղարաբաղցիները սկսում են իրանց փոխադարձ ծաղրը, ըստ հին սովորության:

Քնի, քըմատսղ, քնի, փլավը պրծավ, կատակում է ղարաբաղցին, պապիդ մոլահացը:

Շնորհակալ ամ, պատասխանում է շամախեցին, փորս երկու կերակուրի սորված չէ: Մինն ուտում ամ, կուշտ ամ:

Այս պատասխանի մեջ երևում է շամախեցու անփութությունը դեպի իր շահերը, ծուլությունն ու քիչով գոհ լինելու հատկությունը: Այս է պատճառը, որ նա նյութապես ետ է մնացել իր ղարաբաղցի հայրենակցից:

Կես ժամ ևս, և ահա, վերջապես, ածուրդի գներն սկսում են կամա-կամաց հայտնվել: Մասնակցողները այլևս գաղտնի չեն պահում իրանց տված գները: նայում եմ թիֆլիսեցիներին, և ի՛նչ փոփոխություն: Չկա այլևս առաջվա հուզումը, աղմուկը: նրանք համարում են իրանց արդեն հաղթված: Ի պատիվ նրանց պիտի ասել, որ գներ նշանակելում եղել են համեմատաբար համեստ, չեն կամեցել անփող թիֆլիսեցիների վերջին գրողները վտանգի ենթարկել: Լսվում են չտեսնված գներ, գներ, որ զարմանք են հարուցանում հմուտ նավթարդյունաբերների կողմից: Միայն մի թիֆլիսյան ընկերության, այն էլ կարծեմ ամենից աղքատը, մի կտոր հողի համար տվել է մի այնպիսի գին, որ ընկերության դրամագլուխը ծովը գցած պիտի համարել: Բայց այդ ընկերության մասին կգրեմ ուրիշ անգամ, զգուշացնելու համար նրա բաժնատերերին ապագա փորձանքից:

Առաջին օրը կարողացան բանալ հազիվ 30 ծրար: Մյուս օրը ածուրդը տեղափոխեցին ժողովարանի շինությունը: Այստեղ այնքան ընդարձակ էր, որ մարդիկ երկյուղ չունեին իրանց կողերը ջարդվելուց: Եվ իրավ ածուրդի երկրորդ և երրորդ օրերը այլևս չկրկնվեց առաջին օրվա անկարգությունը: Վերջապես,

կրքերն արդեն բավական հանդարտվել էին:

Դժբախտաբար, Ժամանակս չի ներում նկարագրելու այն բոլոր բնորոշ դեպքերը, որ տեղի ունեցան այդ երեք օրվա ընթացքում: Կարելի է ասել, որ Բաքվի աճուրդը այս անգամ ներկայացնում էր մարդկային բոլոր բացասական հատկությունների մի տեսարան, ուր գլխավոր դերը կատարում էին հայերը: Հետաքրքիր դիտողի համար այդտեղ կար վերին աստիճանի հարուստ նյութ, ուսումնասիրելու ժամանակի ոգին՝ բազմատեսակ տիպարների մեջ: Անկարելի է մի շարք ֆելիետոններով ասպարեզ հանել տեսարանի նույնիսկ ընդհանուր գծերը: Վերջապես անկարելի է ֆելիետոնի, ծաղրի առարկա դարձնել այն, ինչ որ դիտողին ձգում է լուրջ ու տխուր մտածողության մեջ: Այո, տխուր, վասնզի այն, ինչ որ ես տեսա գոնե հայ հասարակության ներկայացուցիչների կողմից, տխուր էր և վերին աստիճանի հուսահատական: Ոսկեպաշտության, նախանձի, եղբայրատեցության, ստի ու խաբեբայության այդչափ արտահայտություն այդչափ կարճ միջոցում ես չեմ տեսել երբեք: